ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<08>> Օգոստոսի 2023թ. Ն ՄՈ/ 348 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի Ն ՄՈ/271-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Ինգա Մարկոսյանի 2023 թվականի օգոստոսի 7-ի գրությունը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի հուլիսի 14-ի «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արուսյակ Ավագյանին արձակուրդ տրամադրելու մասին» ՆՄՈ/271-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

   1) որոշման 2-րդ կետում ««Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ինգա Մարկոսյանին» բառերը փոխարինել «2023 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 7-ը ներառյալ՝ «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ինգա Մարկոսյանին, 2023 թվականի օգոստոսի 8-ից 18-ը ներառյալ՝ «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Թամարա Սուքիասյանին» բառերով:
   2) որոշման 3-րդ կետում «օգոստոսի 18-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան» բառերը փոխարինել «օգոստոսի 7-ը ներառյալ և «Արևիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Թամարա Սուքիասյանի աշխատավարձի վճարումը 2023 թվականի օգոստոսի 8-ից 18-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

08.08.2023

X

VERIFIED OCSP 08.08.2023 08:31:20 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ